Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի
դատավոր Լ. Աթանյանին

Թիվ 90955212 քրեական գործով տուժողի իրավահաջորդ
Մերուժան Կալեյանի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց

Հարգելի դատարան, դատավարության հարգելի մասնակիցներ,

2012թ. սեպտեմբերի 6-ին ՊԲ թիվ 35383 զորամասի ժամկետային զինծառայող Հայկ Կալեյանը, ըստ նախաքննության վարկածի, զորամասի հրաձգարանի խրամաբջիջում հրաձգություն կատարելու ժամանակ ինքնասպանություն նպատակով «ԿԳ տեսակի ՎՊ-647» համարի գնդացրով 3 կրակոց է արձակել իր որովայնի շրջանում, այնուհետև Մարտունու զինվորական հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին, մահացել է:

Ես՝ Արթուր Ալբերտի Սաքունցս, հանդիսանում եմ պետության վերահսկողության ներքո գտնվող կառույցում մահացած Հայկ Կալեյանի հոր, գործով որպես տուժողի իրավահաջորդ ներգրավված Մերուժան Կալեյանի ներկայացուցիչը: Այն մարդու ներկայացուցիչը, ում որդին մեկնել էր պարտադիր զիվորական ծառայության՝ կատարելու ՀՀ Սահմանադրությամբ իր վրա դրված պարտականությունը, սակայն իր որդու փոխարեն ստացել է միայն վերջինիս դիակը: Որդեկորույս ծնողների միակ սփոփանքն իրենց որդու մահվան իրական հանգամանքների պարզումն ու մեղավորներին ըստ օրենքի պատասխանատվության ենթարկելն է, որովհետև միայն այդ կերպ նրանք կհամարեն, որ կատարել են իրենց ծնողական պարտքը, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ գործի նախաքննություն և դատաքննություն իրականացնող մարմինները գործեն օրենքի շրջանակներում, պատշաճորեն կատարեն իրենց պաշտոնական պարտականությունները, գործեն անկողմնակալության, օբյեկտիվության, բազմակողմանիության և ամենակարևորը՝ արդարության սկզբունքներով: Որովհետև պետության, Ձեր հարգելի դատարան, մեզանից յուրաքանչյուրի անվտանգությունը պահպանող զինվորի համար պատասխանատվություն կրում է մեզնից յուրաքանչյուրը, որովհետև բանակում տեղի ունեցած մահվան դեպքերով մեղավորներին պատասխանատվության ենթարկելը ուղղված է ոչ միայն զինված ուժերում մահվան դեպքերի կանխմանը, զինծառայողների՝ սպաների և զինվորների կողմից հետագա անօրինականությունների բացառմանը, այլև

արդարադատության իրականացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը զինված ուժերում:

Սույն գործի քննության ընթացքում ինչպես տուժող կողմի, այնպես էլ նախաքննական մարմնի, մեղադրողի, դատարանի միակ խնդիրը պետք է լիներ Հայկ Կալեյանի մահվան իրական հանգամանքների պարզումը: Սակայն գործով նախաքննությունն ընթացել է միակողմանի, նախաքննությամբ գնահատական չի տրվել մի շարք կարևոր հարցերի, որոնք կարող էին էական նշանակություն ունենալ գործի ելքի վրա:

Սույն ճառի շրջանակներում կներկայացնեմ ամբողջ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների հիման վրա բացահայտված հանգամանքները, որոնց հիման վրա պնդում եմ, որ նախաքննությունը և դատաքննությունը չեն իրականացվել օրինականության հիման վրա: Թիվ 90955212 քրեական գործի նյութերով հիմնավորված չէ ինչպես Հայկ Կալեյանի ինքնասպանության, այնպես էլ նրան մեկ այլ անձի (անձանց) կողմից ապօրինաբար, դիտավորյալ կյանքից զրկելու վարկածի հերքումը:

Սույն գործով թույլ տրված խախտումներ

1. թիվ 90955212 քրեական գործի շրջանակներում նշանակված դատաձգաբանական փորձաքննության վերաբերյալ 05.12.2012թ. ստացված եզրակացության համաձայն՝ Հ. Կալեյանի, ի թիվս այլնի, աջ ականջից, ձախ ականջից, աջ քթանցքերից, ձախ քթանցքից, դեմքից և աջ և ձախ ձեռքերից վերցված նմուշների խծուծներից, հագուստից, անտիմոնի մետաղացման հետքեր են հայտնաբերվել միայն աջ ձեռքից վերցված խծուծների վրա:
Դատական քննության ժամանակ որպես վկա դատարանում հարցաքննվել է գործով փորձաքննություն իրականացրած փորձագետ Հ. Ղուկասյանը, որը սպառիչ պատասխան չի տվել այն հարցին, թե ինչ պատճառով է կամ ինչպես էր հնարավոր, որ միայն մեկ ձեռքի վրա լիներ մետաղացման հետքեր: Փորձագետը նշել է, որ իրեն հանձնված բամբակե խծուծներից, միայն «աջ ձեռքի»-ի վրա է հայտնաբերվել մետաղացման հետքեր, իսկ այլ մասերում մետաղացման հետքեր չհայտնաբերելը կարող է կապված լինել կլիմայական պայմաններից:
Հարկ է նշել, որ Հայկ Կալեյանը ձախլիկ է եղել և նման պայմաններում ինչպես էր հնարավոր, որ եթե մարդը ձախլիկ է, և ամենայն հավանականությամբ կրակոց է արձակել ձախ ձեռքով, ապա մետաղացման հետքեր հայտնաբերվեին միայն աջ ձեռքի վրա: Այս հարցը վարույթն իրականացնող մարմնի և հետագայում նաև դատարանի կողմից չի պարզաբանվել:

2. Վարույթն իրականացնող մարմնի կողմից նշանակվել է հետմահու դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փոձաքննություն, որի վերաբերյալ ստացված թիվ 22/13 եզրակացությամբ պարզվել է, որ Հ. Կալեյանը գտնվել է դեզադապտացիոն վիճակի մեջ, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և պահվածքի վրա: Հ. Կալեյանը ոչ ամբողջ ծավալով է կարողացել գիտակցել իր գործողությունների փաստացի նշանակությունը և ոչ ամբողջ ծավալով է կարողացել ղեկավարել դրանք: Գործով մեղադրյալների և Հ. Կալեյանի ինքնասպանություն գործելու նախորդող հոգեվիճակի միջև չկա ուղղակի պատճառահետևանքային կապ: Նմանատիպ պայմաններում չի պարզվել, թե որն էր Հ. Կալեյանի ինքնասպան լինելու շարժառիթը, այս հարցի վերաբերյալ պարզաբանումները գործի ելքի համար ունի էական նշանակություն: Ի դեպ հարկ եմ համարում նշել, որ գործով անցնող վկաների մի մասը, ճանաչելով Հ. Կաեյանին, իմանալով նրա անձը և բնվորությունը նշել են, որ իրենք չեն կարծում, կամ չեն մտածել, որ Հ. Կալեյանը կարող էր ինքնասպանություն գործել:

3. Սույն գործով դատաքննության ավարտից հետո, երբ դատարանը անցել է գործում եղած ապացույցների հետազոտմանը, տուժող կողմը միջնորդություն է ներկայացրել դատաքննությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ նշանակված հետմահու դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փոձաքննությամբ, փորձագետին հարց չի առաջադրվել, այն մասին, կա արդյոք պատճառահեևանքային կապ ինքնասպանության և այն հանգամանքի շուրջ, որ Հ. Կալեյանը բազմաթիվ անգամներ առողջական վիճակի վերաբերյալ գանգատներով՝ մասնավորապես ծնկների ցավի, գիշերամիզության (անմիզապահություն) պատճառով դիմել է բուժկետ՝ համապատասխան բժշկական հետազոտության համար, սակայն դա դիտվել է որպես սիմուլյանտություն և որևէ գործողություն չի իրականացվել: Միջնորդությունը ինչպես և մյուսները Ձեր կողմից հարգելի դատարան մերժվել է: Հ. Կալեյանը ունեցել է անմիզապահություն և մեկ անգամ 2012թ. օգոստոս ամսին երբ նա քնած է եղել 2-րդ հարկի մահրճակալի վրա տեղաշորում միզել է և կաթիլները ընկել են 1-ին հարկի մահճակալին պառկած շարքային Գևորգ Ղուկասյանի վրա, նման դեպք է տեղի ունեցել նաև շարքում կանգնած ժամանակ: Զորամասի հրամանատարությունը իմանալով այն մասին, որ Հ. Կաեյանը ունի անմիզապահություն նրան բուժկետ չի տեղափոխել, իսկ այն ժամանակ երբ ինքն է դիմել է իր գանգատներվ բուժկետ, դա նրանց կողմից դիտվել է սիմուլյանտություն: Այսինքն սույն դեպքում թիվ 35383 զորամասի հրամանատարական կազմի կողմից պատշաճ կերպով չի կատարվել իրենց լիազորությունները, ինչն էլ հանգեցրել է այն հանգամանքին, որ Հ. Կալեյանը ինքն իրեն նվաստացած է զգացել իր աչքերում, բացի այդ, տեղի ունեցածի հետևանքով զինծառայողների աչքերում ևս նվաստացել է, նրանք կարող էին ծաղրել Կալեյանին, ինչն էլ կարող էր հանգեցնել ծանր հետևանքների: Ավելին, հարկ է նշել նաև, որ այս դեպքերը զորամասում որևէ ձևով չեն արձանագրվել, ուսումնասիրություն չի կատարվել:

4.Հայկ Կալեյանը բնութագրվել է պրոբլեմային, ինքնամփոփ, ծառայության պայմաններին դժվար հարմարվող, առողջական խնդիրներ ունեցող անձ, այսպես են բնութագրել իր հետ ծառայողներ սույն գործով վկաները:

Համաձայն՝թիվ 35383 զորամասի 15ՀՎՅՀԴ 3հջ ԿԳ գնդացրորդ՝ շարքային Հայկ Մերուժանի Կալեյանի ինքնասպանության փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքների՝ պրոբլեմային, ինքնամփոփ, ծառայության պայմաններին դժվար հարմարվող, առողջական խնդիրներ ունեցող զինծառայողների հետ տարվող աշխատանքներում թույլ տրված կոպիտ բացթողումների, զինվորական կոլեկտիվներում տիրող անհանդուրժողականության մթնոլորտի, անձնակազմի բարոյահոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման, անհատական-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման նկատմամբ անհետևողական ձևական մոտեցում ցուցաբերելու հրամատարությանը չվստահելու պատճառով: Անձնակազմի շրջանում դեռևս առկա է ֆիզիկապես թույլ, ինքնամփոփ, մտավոր թերզարգացած զինծառայողներին ծաղրելու, նրանց հոգեբանորեն ճնշելու, նվաստացուցիչ պիտակներ կպցնելու, անվանարկելու արաքտավոր պրակտիկան:

Հայկ Կալեյանը շարունակաբար համածառայակիցների կողմից ենթարկվել է նմանատիպ վերաբերմունքի, մասնավոապես նրան երբեմ անվանել են «հղ՞ի ես, արա, որ փորդ ուռած է» և այս ամենը կատարվել է տվյալ զորամասի հրամանատարական անձնակազմի թույլ վերահսկողության պայմաններում: Այս կապակցությամբ վաշտի հրամանատար Դավիթ Ալեքսանյանը, չունենալով բժշկական գիտելիքներ, գտել է, որ գիշերամիզության մեկ դեպքը բավարար չէ Հ.Կալեյանին բժշկական զննության ուղարկելու համար:

5.Սույն գործի շրջանակնեում ոչ նախաքննության մարմնի և ոչ էլ դատարանի կողմից չի պարզվել, այն հանգամանքը, թե Հ. Կալեյանին ով է առաջինը մոտեցել այն բանից հետո, երբ ըստ նախաքննության վարկածի Հ. Կալեյանը կրակել է իր վրա: Գործով վկաները տվել են միմյանց հակասող ցուցմունքներ: Մասնավորապես վկա Վոլոդյա Խաչատրյանն իր ցուցմունքում նշել, որ Հ. Կալեյանին կրակոցներից հետո առաջինը հասել է վաշտի հրամանատար Դավիթ Ալեքսանյանը: Իր ցուցմունքում վկա Դավիթ Ալեքսանյանը ևս նշում է, որ կրակոցի ձայներ լսելուց հետո ինքը առաջինն է մոտեցել Հ. Կալեյանին իսկ գործով մեղադրյալ ներգրավված Ալեքսանդր Պետրոսյանն իր ցուցմունքում նշում է, որ ինքն է առաջինը մտել խրամատ:

Այս հանգամանքի պարզումը էական նշանակություն կարող էր ունենալ գործի լուծման համար, քանի որ այն չպարզելը հանգեցրել է նաև այն հանգամանքին, որ չի պարզվել Հայկ Կալեյանի ընկած դիրքը և զենքի փողի ուղղությունը՝ այսինքն զենքը աջ, թե ձախ կողմում է գտնվել: Դատական քննության ժամանակ այս հարցի պատասխանը վկաների

/ Մհեր Հովհաննիսյանի, Վոլոդյա Խաչատրյանի/ հարցաքննությամբ նույնպես պարզել չի հաջողվել:

6.Հայկ Կալեյանի մարմին վրա վնասվածքներ առաջացրած կրակոցների ուղղությունը չի համապատասխանել իր ընկած դիրքին, գործով վկաների մի մասը նշում է, որ Հ. Կալեյանը զենքը վերցնելով շրջվել է իրենց ուղղությամբ իրենք մտածել են, որ ցանկանում է կրակել իրենց ուղղությամբ, և փախել են, իսկ մյուս մասը՝ ի դեմս Դ. Սանամօղլյանի պնդել է, որ իրենք չեն փախել, երբ Հ. Կալեյանը շրջվել է: Սակայն որևէ մեկը չի տեսել, թե ինչպես է Հ. Կալեյանը իրեն կրակում: Այս հակասությունը ևս չի պարզաբանվել: Վարույթն իրականացնող մարմնի կողմից քննության առարկա չի դարձել այն վարկածը, որ Հայկ Կալեյանի հետ կատարվածը կարող էր սպանություն լինել, այլ ոչ թե ինքնասպանություն: Չի պարզաբանվել այն հանգամանքը, որ այն պահին երբ Կալեյանը զենքը ձեռքին շրջվել է, ներկաներից որևէ մեկը կարող էր կրակել նրա ուղղությամբ՝ առաջնորդվելով ենթագիտակցությամբ կամ պաշտպանական ռեակցիայով, որ Հ. Կալեյանը կարող է կրակահերթ բացել իրենց ուղղությամբ:

7. Հայկ Կալեյանը հրաձգության ժամանակ իր հագին չի ունեցել զրահաբաճկոն և դրա համար պատասխանատու անձ է համարվում վաշտի հրամանատարը, որը պարտավոր էր ապահովել հրաձգությանը մասնակցող զինվորներին զրահաբաճկոն հագնելու: Միգուցե այն դեպքում, երբ Հ. Կալեյանը զրահաբաճկոնով լիներ՝ չմահանար, այլ ուղակի վիրավորվեր: Այս այն բազմաթիվ դեպքերից է, երբ սպայի անփութությունը ուղղակիորեն հանգեցրել է ծանր հետևանքների:

8. Հ. Կալեյանի ստացած վնասվածքների հետքերը և ընկած դիրքը չեն համապատասխանել միմյանց և քննության առարկա չի դարձել այն հանգամանքը, որ արդյոք Հ. Կալեյանը կարող էր նման դիրքից ստանալ վերևից ներքև ուղղություն ունեցող վնասվածք, նման վնասվածքներ ստանալու համար առնվազն պետք էր կրակողի դիրքը լիներ ավելի բարձր մակարդակի վրա, քան հրազենային վնասածք ստացողինը:

9.Հ. Կալեյանի հորեղբայրը՝ Վարդան Կալեյանը ով ներկա է գտնվել դիահերձման ժամանակ, դատարանում հարցաքննությամբ հայտնել է, որ ինքը տեսել է Հայկի մարմնի վրա միայն 2 հրազենային վնասվածքներ, ինչպես նաև նշել է, որ նրա աջ ձեռքի 3 մատերը սևացած են եղել, սակայն այս հանգամանքի մասին, որևէ նշում դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության մեջ փորձագետի կողմից չի նշվում: Իսկ դատաբժշկական փորձագետին դատաքննության ժամանակ հարցաքննելու վերաբերյալ իմ միջնորդությունը մերժվեց դատարանի կողմից, և այս հակասությունը նույնպես հնարավոր չեղավ պարզաբանել:

10. Հ. Կալեյանը հրաձգության ժամանակ վրիպել է և վաշտի հրամանատարը հայհոյանք է տվել նրա հասցեին, նախաքննությունը չի անրադարձել այն հանգամանքին, որ ինչ ազդեցություն կարող էր ունենալ բոլորի ներկայությամբ իր հասցեին հայհոյանքներ լսելը զինծառայողի վրա, ինչպես նաև ինչ պատճառահետևանքային կապ այն կարող էր ունենալ դրան հաջորդող դեպքերի վրա:

11.Սույն գործով հիմնականում բոլոր վկաների դատական քննության ընթացքում տրված ցուցմունքները էականորեն տարբերվում էին նախաքննության ժամանակ տված ցուցմունքներից և նրանք դատարանում հայտարարել են, որ նախաքննության ընթացքում իրենց կողմից տրված ցուցմունքները եղել են բռնությունների, սպառնալիքների արդյունք:

2013թ. հուլիսի 3-ին նշանակված դատական նիստի ժամանակ գործով վկա Արման Վալերիկի Բոզոյանը ասել է, որ ինքը և գործով վկաներ Գեղամ Սիրադեղյան, Սարգիս Ավալյանը, Դերենիկ Սանամօղլյանը 10 օրից ավել գտնվել են ռազմական ոստիկանությունում, ենթարկվել են ծեծի, բռնությունների և սպառնալիքների ազդեցության ներքո ցուցմունքներ են վերցվել նրանցից:

2013թ. հուլիսի 23-ին նշանակված դատական նիստի ժամանակ գործով վկա Վոլոդյա Խաչատրյանը հայտնել է, որ ինքը 2012թ. սեպտեմբերի 6-ից մինչև նոյեմբերի 7-ը պահվել է ռազմական ոստիկանությունում՝ անազատության մեջ, ինչպես նաև նշել է, որ նշված ժամանակահատվածում անազատության մեջ ինքը միայնակ չի գտնվել, իր հետ գործով այլ վկաներ էլ են եղել:

Նույն դատական նիստի ժամանակ գործով վկա Գևորգ Ղազարյան հայտնել է, որ ինքը ռազմական ոստիկանությունում երկար ժամանակ անազատության մեջ չի մնացել սակայն Ստեփանակերտի ռազմական ոստիկանությունում ծեծի է ենթարկվել սև համազգեստով անձանց կողմից, քննիչը ստիպել է ցուցմունք գրել իր թելադրած ձևով: Այս հանգամանքի վերաբերյալ ելնելով անհրաժեշտությունից դատարանում Գ. Ղազարյանի նկատմամբ պաշտպանության միջոցներ կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվել իմ կողմից, որը սակայն ինչպես մյուս միջնորդությունները մերժվել է:

Այսպիսով, վերլուծելով վերը նշվածը կարող ենք փաստել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից սույն գործի շրջանակներում ի թիվս այլնի խախտվել է ՀՀ սահմանադրության 16-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ, 11-րդ, Կոնվենցիայի 3-րդ, 5-րդ հոդվածների դրույթները:

Այս քրեական գործի նախաքննության ընթացքում, 3 անգամ փոխվել է վարույթում մասնակցող քննիչը ինչը իր բացասական ազդեցությունն է ունեցել գործի ելքի վրա:

Ամփոփելով վերը նշված հանգամանքները, կարող եմ պնդել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի կատարվել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, սույն քրեական գործի շրջանակներում, դատարանում բարձրացված թերությունների վերաբերյալ հարցերը ևս մնացել են անպատասխան:

Գործի դատաքննության ընթացքում ևս թույլ են տրվել ՀՀ օրենսդրության խախտումներ:

- անհրաժեշտ է նշել, որ գործը դատաքննության է ուղարկվել ոչ իրավասու դատարան: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Սույն գործի դատաքննությունը կատարել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, իսկ թիվ 35383 զորամասը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և չի ընդգրկում ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Նման պայմաններում դատական նիստերի իրականացումը չի բխում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (կոնվենցիա) 6-րդ հոդվածի դրույթներից՝ այսինքն սույն պարագայում կարող ենք փաստել, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դրույթների խախտում:

Դատաքննության ողջ ընթացքում դատարանի կողմից դրսևորվել է կողմնակալ վերաբերմունք գործով տուժող կողմի նկատմամբ, մասնավորապես դատարանի կողմից մերժվել են իմ կողմից ներկայացված մի շարք կարևոր միջնորդություններ՝ դրանք համարելով անհիմն:

- 2013 թվականի նոյեմբերի 6-ին իմ կողմից ներկայացվել է դատարանի դահլիճում քննչական փորձարարություն կատարելու մասին միջնորդություն, որի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմինը քննության առարկա չի դարձրել պարզելու համար այն հանգամանքը, թե կարող էր արդյոք Հ. Կալեյանը ելնելով իր մարմնակազմական տվյալներից նշված գնդացրով ինքնասպանություն գործել և ստանալ դատաձգաբանական և դատաբժշկական փորձաքննություններով արձանագրված հարզենային վնասվածքները: Մասնավորապես քննիչի կողմից չի կատարվել քննչական փորձարարություն պարզելու համար այն: Դատարանի դահլիճում քննչական փորձարարություն կատարելը

հնարավորություն կտար պարզելու, թե արդյոք տուժող Հայկ Կալեյանը կարող էր նախաքննության մարմնի կողմից առաջադրված վարկածի համաձայն ինքնասպանություն գործել: Սակայն դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է, խախտելով ՀՀ քրեական դատարավության օրենսգրքով սահմանված նորմերը: ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 351-րդ հոդվածի 1-ին մասի՝ ճանաչման ներկայացնելը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը դատական քննության ժամանակ կատարվում է սույն օրենսգրքում սահմանված կանոնների պահպանմամբ, կողմերի մասնակցությամբ՝ առանց ընթերականների:

Դատարանի դահլիճում քննչական փորձարարություն կատարելու մասին իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0002/11/10 գործում մասնավորապես նշվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ եթե նախաքննության ժամանակ փորձաքննություն չի նշանակվել, դատական քննության ժամանակ կողմերն իրավունք ունեն միջնորդել այն նշանակելու: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 351-րդ հոդվածից բխում է, որ ճանաչման ներկայացնելը և քննչական փորձարարությունը կարող են կատարվել դատական քննության ժամանակ:

Կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ պնդումներ

Այսպիսով, ակնհայտ է, որ խախտվել է Հայկ Կալեյանի կյանքի իրավունքը: Հայկ Կալեյանի կյանքի իրավունքի խախտում թույլ է տրվել նաև նախաքննական մարմնի կողմից ոչ արդյունավետ քննություն կատարելու արդյունքում: Անձի կյանքի իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով: Մասնավորապես, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:
Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված «կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով» արտահայտությունը բնութագրվում է որպես ընթացակարգային պարտավորություն, որի համաձայն պետությունը պետք է իրականացնի ցանկացած հանգամանքներում կյանքից զրկելու փաստի արդյունավետ հետաքննություն:

Տվյալ դեպքում, սակայն, նախաքննության մարմինը չի իրականացրել արդյունավետ քննություն, պարզելու գործով տուժող Հայկ Կալեյանի կյանքից զրկելու հանգամանքները, ավելին առանց որևէ այլ վարկած առաջ քաշելու կատարվածը որակել է որպես ինքնասպանություն: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ նախաքննության մարմինը պարտավոր էր մահվան փաստի կապակցությամբ ապահովել արդյունավետ հետաքննություն, իսկ հետաքննության բացակայությունը կամ ոչ պատշաճ կատարումը ևս դիտարկվում է պետության կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, որը փաստացի չի ապահովում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը: Այսինքն՝ պետության կողմից պատշաճ քննություն չիրականացնելը հանդիսանում է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտում:

Ըստ էության, Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նպատակն է պաշտպանել անհատներին ապօրինի սպանությունից: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը պարունակում է պոզիտիվ, նեգատիվ և դատավարական պարտականություններ: Նեգատիվ պարտականությունը պահանջում է, որպեսզի պետությունները ձեռնպահ մնան ապօրինաբար մարդու կյանքը խլելուց: Պոզիտիվ պարտականությունը նախատեսում է պահանջ, որի համաձայն պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու իրենց ընդդատության տակ գտնվողների կյանքի պաշտպանությունը: Դատավարական պարտավորությունը, որը նույնպես կարող է նկարագրվել որպես պոզիտիվ պարտականություն, պարտավորեցնում է գործուն պաշտոնական հետաքննություն անցկացնել այն դեպքերում, երբ անհատը մահացել է պետության կողմից վերահսկվող կառույցում:

Սույն դեպքում պետությունը ուներ պոզիտիվ պարտավորություն պաշտպանելու (ապահովելու) Հայկ Կալեյանի ***կյանքի իրավունքը,*** պաշտպանելու նրան ցանկացած տիպի ոտնձգությունից և նվաստացումներից:

Դատարանը 2-րդ հոդվածի լույսի ներքո մեկնաբանել է նաև տուժածի կամ նրա ազգականների համար արդարադատության արդյունավետ մատչելիությունն ապահովող հետաքննության մանրազնին ուսումնասիրության իրավունքը: Պետության պոզիտիվ պարտավորությունները ներառում են ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական բնույթի պարտավորություններ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ իր մի շարք վճիռներում տվել է հետևյալ մեկնաբանությունը՝ կոնկրետ անհատին կամ անհատներին պաշտպանելու կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու՝ պետության պոզիտիվ պարտավորությունը կարող է ծագել այն դեպքերում, երբ իշխանություններն իմացել են կամ պարտավոր էին իմանալ կոնկրետ անհատի կամ անհատների կյանքի նկատմամբ երրորդ անձանց հանցավոր

գործողությունների պատճառով առաջացող իսկական և անմիջական ռիսկի գոյության մասին:

Իրենց իրավասության սահմաններում անհրաժեշտ միջոցառումների ձեռնամուխ չլինելը, որոնք կարող էին ակնկալվել տվյալ ռիսկից խուսափելու համար, հետևաբար, կհանդիսանա կյանքի իրավունքի խախտում: Դիմումատուն միայն պարտավոր է ցույց տալ, որ իշխանությունները չեն արել այն ամենը, ինչ կարելի էր ողջամտորեն ակնկալել նրանցից՝ խուսափելու անձի կյանքի նկատմամբ իսկական և անմիջական ռիսկից, որի մասին նրանք իմացել էին կամ պարտավոր էին իմանալ (Osman v United Kingdom 1998թ.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչում է, որ գործնական տեսանկյունից ապօրինաբար և կամայական կյանքից զրկելու արգելքը գլխավորապես իմաստազուրկ կլիներ առանց քննության ներպետական ընթացակարգերի նկատմամբ խստագույն պահանջների սահմանման, որոնք կոչված կլինեին ապահովել կյանքի պաշտպանությանն ուղղված ներպետական օրենքների արդյունավետությունը: Խոսքը գնում է այսպես կոչված 2-րդ հոդվածի «դատավարական ասպեկտի» մասին: Օրինակ Kaya v Turkey (1998թ.) գործով դատարանը գտել է, որ Թուրքիայի իշխանությունների կողմից չի պահպանվել կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական ասպեկտը, այսինքն՝ չի իրականացվել արդյունավետ քննություն սպանության առնչությամբ:

Յասան ընդդեմ Թուրքիայի, Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի և Շենեգանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով ՄԻԵԴ-ն հայտնել է այն տեսակետը, որ պետությունը կարող է ճանաչվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածը խախտող պետություն՝ հետաքննելու պարտավորության առնչությամբ նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չի կարողանում ապացույցներ ներկայացնել պետության գործակալների կողմից անձի դիտավորյալ սպանության կապակցությամբ: Հետաքննությունը պետք է լինի «մանրակրկիտ, անկողմնակալ և զգուշավոր»: Հետաքննությունը պետք է նաև գործուն լինի այն իմաստով, որ դրա արդյունքում հնարավոր լինի պարզել, թե արդյոք նման դեպքերում գործադրված ուժը հիմնավորված է եղել, թե ոչ կոնկրետ հանգամանքներում, և բացահայտվեն ու պատժվեն մեղավորները: Սա ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցների առնչվող պարտավորություն է:

2-րդ հոդվածով պահանջվում է, որպեսզի կատարվի մանրակրկիտ, պատշաճ և բազմակողմանի քննություն, որը պետք է իրականացվի արագ և առանց ձգձգումների, և որին կարող են մասնակցել տուժողի իրավահաջորդները, իրականացվի իրադարձություններին մասնակից դարձած անձանցից անկախ մի մարմնի կողմից և այնպիսի կերպով, որն ապահովում է բավարար հանրային վերահսկողություն: 2-րդ հոդվածի դատավարական ասպեկտը հատկապես վերագրելի է այն դեպքերին, երբ պետական պաշտոնյաները պատասխանատվություն են կրում կյանքը խլելու համար, կամ երբ վիճարկվում է, որ նրանք գաղտնի համաձայնության մեջ են գտնվել այլոց հետ,

որը հանգեցրել է մահվան: Այս պարտավորությունը կարող է բնութագրվել որպես «ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցներին առնչվող պարտավորություն», քանի որ քննությունը պետք է օգնի ապահովել, որպեսզի պաշտոնյաները հաշվետու լինեն և բացառի վերջիններիս անպատժելի գործելակերպի ձևավորման հնարավորությունը (Kaya v Turkey (1998թ.):

Մինչդեռ, Հայկ Կալեյանի մահվան վերաբերյալ գործի նախաքննությունը չի կատարվել լրիվության, բազմակողմանիության, անկողմնակալության սկզբունքներով, ամեն կերպ փորձ է արվել խուսափել Հայկ Կալեյանի մահվան համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուց, ինչը ենթադրում է ՀՀ պաշտպանության նախարարության ազդեցությունը ՀՀ պաշտպանության նախարարության առաջին կայազորային քննչական բաժնի կողմից գործի քննության ու ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ և 354-րդ հոդվածներով, միջնորդում եմ թիվ 90955212 քրեական գործը վերադարձնել մեղադրողին՝ լրացուցիչ նախաքննության:

Տուժողի իրավահաջորդ Մերուժան Կալեյանի ներկայացուցիչ՝

Արթուր Սաքունց

17.12.2013թ. ք.Ստեփանակերտ